


АНУШАВАН ЗАКАРЯН. Сергей Городецкий в Западной Армении и в Закавказье (1916–1921 гг.). Ереван: Изд-во «Гитутюн» НАН РА, 2015, 230 с.

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱԲԱՐՅԱՆ. Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (1916–1921 թթ.), *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 230 էջ:*

*Երկար տարիներ բանասիրական գիտությունների դոկտոր Անուշավան Զաբարյանը ջանադրաբար ու մեծ հետազոտում է XIX դարավերջի և XX*



*դարասկզբի հայ-ռուսական պատմագրական կապերն ու լուսաբանում դրանք խորքային ձևով՝ երևան բերելով մեկը մյուսին հաջորդող մենագրություններ, որոնք նորովի հետաքրքրություն են առաջացնում և անպայման արժեքավոր են թե՛ հայ, թե՛ ռուս բանասիրության ու պատմագիտության համար:*

*Բոլորովին վերջերս մասնագետներին, նաև լայն շրջանակի ընթերցողներին գիտնականը ռուսերենով մատուցեց «Սերգեյ Գորոդեցկին Արևմտյան Հայաստանում և Անդրկովկասում (1916–1921 թթ.)» արժեքավոր մենագրությունը, որը նվիրված է Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին: Գիրքը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ խմբագրական-հրատարակչական խորհրդի և Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի գիտական խորհրդի որոշումներով՝ ՀՀ ԳԱԱ հայագիտական ուսումնասիրությունների համահայկական հիմնադրամի աջակցությամբ, տպագրվել՝ ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչությունում:*

*Մենագրությունը բաղկացած է 7 գլխից [1-ին՝ «Մարդասիրական առաքելությամբ՝ Արևմտյան Հայաստան» (ունի 2 ենթագլուխ՝ «Բախտորոշ հանդիպում Հովհ. Թումանյանի հետ» և «Գործունեությունը Վանում»), 2-րդ՝ «Գրական-կազմակերպչական գործունեությունը Թիֆլիսում» (ունի 3 ենթագլուխ՝ «Խմբագրական, դասախոսական և հրատարակչական աշխատանք», «Թիֆլիսի «Արտիստերիումի» «Բանաստեղծների համքարությունը», «Ակմե» ժողովածուն»), 3-րդ՝ «Բանաստեղծություններ, ակնարկներ, Հայաստանի և հայ արվեստի մասին հոդվածներ» (ունի 2 ենթագլուխ՝ «Հայաստանի հրեշտակը» ու «Ակնարկներ, հոդվածներ»), գլուխ 4-րդ՝ «Հայաստանը և Հայկական հարցը Մ. Գորոդեցկու հրապարակախոսության մեջ»,*

5-րդ՝ «Գրական կյանքի հորձանուտում» (ունի 3 ենթագլուխ՝ «Գրականագիտական հայացքներ», «Ս. Գորոդեցկի և Հովհ. Թումանյան», «Մասնակցությունը գրական-մշակութային միջոցառումներին»), 6-րդ՝ «Երևանյան օրեր (1919 թ. ապրիլ)» (ունի 2 ենթագլուխ՝ «Դասախոսություններ. «Վանի սովերները» և «Ժամանակակից հայ քնարերգությունը», «Ճանապարհորդություն դեպի Երևան» հոդվածաշարը), գլուխ 7-րդ՝ «Արժեքների վերագնահատման ճանապարհին», վերջաբանից, անգլերեն լեզվով ամփոփումից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից ու անվանացանկից:

Սկզբից նեթ նկատենք, որ գրքի տարբեր էջերում դրված են լուսանկարներ, որոնք փաստական ձևով ավելի տպավորիչ են դարձնում հեղինակի խոսքը: Նկարված են Հովհաննես Թումանյանը և Սերգեյ Գորոդեցկին (1916 թ.), Արտավազդ Թումանյանն ու Սերգեյ Գորոդեցկին (1916 թ.)՝ առաջինը նահատակի չքնաղ աչքերով, երկրորդը՝ Վանում և շրջակա վայրերում թուրքերի ավերածություններից ու վայրագությունից խոր թախիծ պարունակող հայացքով: Գրքում տեսնում ենք Ս. Գորոդեցկու նոթատետրից մի էջ՝ հայոց այբուբենի տառերով, որը նրան սովորեցնում էր Արտավազդ Թումանյանն ու Վանի նահանգապետ Կոստանդին Համբարձումյանը: Շատ տպավորիչ են հատկապես Վան քաղաքի ու նրա բերդի, Բայազետի բերդի, Արճակի և այլ բնանկարներ՝ արված ջրաներկով, որոնք վկայում են ռուս գրողի նկարչական ակնհայտ ձիրքի մասին: Հիմա չկա հին Վանը, որի մասին ասվել է՝ «Երկնքում դրախտն է, երկրի վրա՝ Վանը»: Այս միտքը հատուկ շեշտում է Սերգեյ Գորոդեցկին, որովհետև 1916-ին իսկապես Վանը թաղված է եղել այգիների մեջ. այդ մասին վկայում են շատերը, այդ թվում՝ ֆրանսիացի Իվ Տերնոնն իր «Armenie 1900» գրքում, որը ստեղծել է Ժան Բլոդ Բեբաբժյանի հետ (տե՛ս Yves Ternon; J.- C. Kebabdjian, Armenie 1900, Paris, 1980): Ֆրանսերեն գրքում (էջ 25) կարդում ենք. «Վանն այս աշխարհում, դրախտը՝ այն: Մա իրոք այդպես է եղել»: Այս նույն միտքը բազմաթիվ օրինակներով և իր ջրաներկ պատկերներով հաստատում է Սերգեյ Գորոդեցկին, որի համար հայերի՝ Վանում ստեղծած հնագույն քաղաքակրթության հուշարձաններն ավերվել ու թալանվել էին իր աչքի առաջ, իսկ Վանի խաղաղ բնակիչները՝ կոտորվել:

Ս. Չաքարյանը ներկայացնում է Ս. Գորոդեցկու հայանպաստ գործունեությունը Արևմտյան Հայաստանում՝ դրանք շաղկապելով քաղաքական իրադարձություններին, հայ-ռուսական տարատեսակ կապերին ու առնչություններին:

Մարդու ներաշխարհը տակնուվրա անող փաստերով Գորոդեցկին գրում է արյան ու մահվան ճիրաններից ազատված բոլորովին մանկահասակ որբերի մասին, որոնց փրկության մեջ տեսնում է Հայաստանի ապագան: Տարիներ անց վաստակած մարդու հպարտությամբ նա գրել է. «Նրանցից (որբերից – Ա. Դ.) ոմանք հիմա էլ աշխատում են Երևանում: Ինձ համար մեծ բերկրանք ու հպարտություն է, որ

կարող եմ Հայաստանում մտնել ցանկացած տունը և այնտեղ գտնել օթևան ու զգվանք» (էջ 21):

Սերգեյ Գորոդեցկու գործունեության թիֆլիսյան շրջանը եղել է շատ բեղուն և արդյունավետ: Նա աշխատանքի է անցել կոնսերվատորիայում և 1917 թ. հուլիսի սկզբից արվեստի տարբեր ճյուղերի, գրականության վերաբերյալ բազում հոդվածներ է գրել «Կավկասկոյե սլովո» թերթում հատուկ իր համար բացված «Արվեստ և գրականություն» խորագրի ներքո: Նրան անհանգստացրել է Թիֆլիսի արվեստի կյանքում եղած որոշակի դատարկությունն ու իր մեծ եռանդով աշխուժացրել է XX դարասկզբին Անդրկովկասի մշակութային կենտրոնը համարվող քաղաքի կյանքը, որը, ի դեպ, գերակշիռ մասով հայաբնակ էր: Ս. Գորոդեցկու ուշադրության կենտրոնում են հայտնվում նաև Թիֆլիսում ապրող հայ, ռուս, վրացի երեխաները, որոնց գեղագիտական դաստիարակությունը դարձնում է իր գերխնդիրը: Մանուկ ստեղծագործողների համար հիմնում է գրական-գեղարվեստական հատուկ ալմա-նախ «Դրախտային արծվիկ» վերնագրով, որի մեջ տպագրվում են 5–12 տարեկան երեխաների գործեր, ըստ որում՝ առանց ավագ սերնդի գրողների որևէ միջատության: «Դրախտային արծվիկի» առաջին համարը լույս է տեսնում 1918-ի մարտի 18-ին: «Տեսողական» արվեստների մասսայականացումը ռուս բանաստեղծն այնուհետև շարունակում է «մեծերի» հետ: Նրա ջանքերով կազմակերպվում և 1918 թ. մարտի 3-ին «Աշխատավոր» թերթի խմբագրության երկու սենյակում բացվում է «Վան-Էրզրում-Տրապիզոն» ցուցահանդեսը, ուր ներկայացվում են այդ քաղաքների պատմական հուշարձանները՝ Բ. Ռյաբովի, Ն. Սներովի և Ս. Կերնի ջրաներկ պատկերներով, լուսանկարներով ու չափագրություններով:

Այդ օրերին ռուս բանաստեղծը ծավալում է նաև հրատարակչական լայն գործունեություն: 1918 թ. մարտին նրա խմբագրությամբ հիմնվում է արվեստի և գրականության «Արս» ամսագիրը: Շուտով դրան կից ստեղծվում է գեղարվեստական նոր տիպի կազմակերպություն՝ «Արտիստերիում», որի նպատակն էր մերձեցնել արվեստի տարբեր բնագավառի գործիչներին, ունկնդիրներին ու հանդիսատեսին, նաև օգնություն ցույց տալ սկսնակ արվեստագետներին: «Արտիստերիումում» բացվում են դասախոսության, ցուցահանդեսների, երաժշտության, երեխաների ստեղծագործության, «Հին Թիֆլիս» բաժինները:

Ս. Գորոդեցկու նշանակալի նախաձեռնություններից մեկն էլ 1918-ի ապրիլին «Արտիստերիումին» կից հիմնադրված «Բանաստեղծների համքարությունն» էր, որի հավաքներին մասնակցում են տարբեր ազգերի ու տարբեր սեռի բանաստեղծներ: Նրանցից մեկը եղել է Հռիփսիմե Պողոսյանը, որը հետագայում ուշագրավ հուշեր է թողել համքարության ծավալած գործունեության մասին: «Բանաստեղծների համքարության» անդամներից մեկը՝ Գ. Էրիստովը, մասնավորապես, գրում է. «Բայց նրան (խոսքը Ս. Գորոդեցկու մասին է – Ա. Դ.) պետք է արժանին մատու-

ցել, նա կարողացավ կազմակերպել բանաստեղծների իսկական դպրոց: Համբարության ամենշաբաթյա հավաքներում բոլոր պոետները կարդում էին իրենց ստեղծագործությունները: Դրանցից յուրաքանչյուրը մանրամասն քննարկվում էր թե ձևի և թե բովանդակության դիտակետից: Խիստ անկողմնակալ ու բարեկամական քննադատությունը անտարակույս շատ օգտակար էր՝ օգնելով բանաստեղծներին «աճելու» (էջ 51): Ի դեպ «Բանաստեղծների համբարությունը» ուներ իր կանոնադրությունը, որը խախտողները հեռացվում էին:

Համբարության ամենօրյա գործունեությունը տալիս է ցանկալի արդյունք. 1919 թ. ապրիլի կեսերին լույս է տեսնում նրա անդամների բանաստեղծությունների առաջին ժողովածուն «Ակմե» խորագրով: Դրանում հանդես են գալիս չորս հայազգի բանաստեղծներ:

Ս. Գորոդեցկու կազմակերպչական բացառիկ ընդունակության մասին Վ. Քաթանյանը (համբարության անդամ, ապա՝ հեռացված) ժամանակին ֆելիետոն է տպագրել՝ «Պատմություն այն մասին, թե ինչպես Թիֆլիսը դարձավ Փարիզ» վերնագրով: Ամեն կատակի մեջ ճշմարտության հատիկ կա: Իսկ հատիկն այն էր, որ Գորոդեցկին դժվարություններից չէր վախենում և հասնում էր իր նպատակին: Նպատակներն էլ ավելի քան ազնիվ ու վեհ էին:

Ա. Չաքարյանը մանրամասն գրել է նաև 1918 թ. Թիֆլիսում լույս տեսած Գորոդեցկու «Հայաստանի հրեշտակը» գրքի մասին՝ զետեղելով դրա կազմի լուսանկարը՝ երկնային քահանայապետության հրեշտակներին հատուկ աստվածային հոգիների բազմաթիվ պատկերով: Գրքում Հայաստանի հրեշտակը վերևից դիտում է ավերակված Հայաստանն ու նրա մորթված զավակներին և հզոր ձայնով ողբկոչում նրանց ու կանխատեսում, որ երկրի վրա ապրող բոլոր ազգերի մեջ մեծագույն դժբախտություն ճաշակած ազգը վերածնվելու է ու տեսնելու է իր երջանիկ ապագան:

Աշխատության մեջ առանձին էջեր են նվիրվել Արևմտյան Հայաստանում 1916, մասամբ 1917 թթ. Ս. Գորոդեցկու գրած հողված-ակնարկներին, անդրադարձ կա դրանց գեղարվեստական կողմերին ու ճանաչողական մնայուն արժեքին: Նրա վաստակն անուրանալի է հայ կերպարվեստի՝ գեղանկարչության, քանդակագործության, կիրառական արվեստների գնահատության և մասսայականացման գործում: Ուշագրավ դիտարկումներով Ա. Չաքարյանը վերլուծում է հայ նկարիչների՝ 1917 և 1919 թթ. կազմակերպած 1-ին ու 2-րդ ցուցահանդեսներում ներկայացված արվեստագետների գործերին տված Ս. Գորոդեցկու նուրբ ու խորաթափանց մեկնաբանությունները, որոնք անպայման խթանել են կերպարվեստի զարգացմանը, օգնել արվեստասեր հասարակայնության վերաբերմունքի ու ճաշակի ձևավորմանը:

Այս վերջին առումով, կարծում ենք, հատուկ ուշադրության են արժանի Ս. Գորոդեցկու գրականագիտական հայացքները, որոնք խորությամբ ներկայացված ու վերլուծված են նրա «Ֆուտուրիզմը պոեզիայում», «Ռուսական նոր պոեզիայի վրա ֆրանսիականի ազդեցությունը (Բողլեր, Վեռլեն, Վերհարն)», «Երկնագույն եղջյուրներ (վրաց սիմվոլիստները)» և այլ հոդվածներում:

Գրքի տպավորիչ էջերից են Ս. Գորոդեցկի ու Հովհ. Թումանյան անհատների առաջին հանդիպման նկարագրությունը և նրանց հետագա գրական ու մարդկային փոխհարաբերությունները, որոնք հատկապես օգտակար են թումանյանագետներին, մանավանդ որ գրքի հեղինակը կատարում է համոզիչ որոշ ճշգրտումներ: Ռուս գրողը խոստովանում է, թե ինքը ցնցված է եղել Թումանյանի ազգային նվիրումից, նրա գործնական կեցվածքից, դեպի մարդ արարած ունեցած եզակի վերաբերմունքից: Պատահական չէ, որ նա խոստովանում է, թե Հայաստանը սիրեց Թումանյանի միջոցով, նրան ընդունեց որպես ուսուցիչ, նաև անվերապահորեն հավատաց հայ ժողովրդի լուսավոր ապագային ու հարատևմանը:

1919 թ. ապրիլի վերջին Գորոդեցկին դասախոսություններ կարդալու, հայ հասարակայնության հետ շփվելու, ժողովրդի կացությունը սեփական աչքերով տեսնելու նպատակով այցելում է նորան-կախ Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևան: Չարմանքով ու հիացմունքով է նա տեսնում, թե ինչպես է անօթևան գաղթականներով լի, աղքատության շեմին կանգնած Երևանը փորձում շտկել հայության վիճակը. ամենուր հայերը համառորեն ու ջանադիր աշխատում են, և ոչինչ բուտաֆորական չկա հանրապետության կյանքում: Այդ ամենի մասին ուշագրավ դիտարկումներ կան Գորոդեցկու «Ճանապարհորդություն դեպի Երևան» հոդվածաշարում:

Գրքում տեսնում ենք Հայաստանի քաղաքական վիճակի իրական պատկերը, հատկապես գորավար Անդրանիկի այն խոսքերի վկայակոչումը, որով նա դիմում է անգլիական բանակի մայր Գիբոնին: Անդրանիկը փաստացի մերկացնում է անգլիական կառավարության անտարբերությունն ու դաժանությունը հայերի ճակատագրի հանդեպ: Չէ՞ որ օրհասական վիճակում գտնվող հայ ժողովրդի շուրջ 300.000 զինվորներ Ռուսաստանի և Անտանտի մյուս երկրների կողմից կռվում էին՝ ցուցաբերելով անասելի խիզախության օրինակներ: Այս փաստերի կողքին Անգլիայի կառավարության աչքի առաջ մոթթվում ու ոչնչանում էր աշխարհի համար կարևոր ու հին քաղաքակրթությունն իր մեջ կրող հայ ժողովուրդը:

Ս. Գորոդեցկին Հայկական հարցի շուտափույթ և արդարացի լուծման պրոպագանդիստներից էր: Նա հմտորեն ուսումնասիրել էր պատմական խոր արմատներ ունեցող այդ հարցը, հայերին ճանաչում էր իրենց ազգային նկարագրի լավագույն գծերով և աշխատում էր նրանց նկատմամբ կատարված պատմական մեծագույն անարդարությունն աշխարհին ներկայացնել անկողմնակալ ձևով: Այդ նպատա-

կով նա ոչ միայն հանդես էր գալիս տասնյակ հոդվածներով (նշենք դրանցից մի քանիսի խոսուն վերնագրերը՝ «Pro Armenia», «Նոր վերք», «Կենդանի գերեզմանոց», «Մի քիչ զուբրոյոգիա», «Պսակ ընկերներին», «Հայաստանի աղետները», «Ղարաբաղ», «Վերջին ճիչը» և այլն), այլև ունենում էր հրապարակային ելույթներ: Ա. Չաքարյանին հաջողվել է մոռացությունից փրկել մի շարք նյութեր և դրանք դնել գիտական շրջանառության մեջ: Դրանցից մեկը գտնվել է Թիֆլիսում լույս տեսնող «Նոր աշխատավոր» պարբերականի 1919 թ. հուլիսյան մի թղթակցության մեջ, որն ունի հետևյալ խորագիրը՝ «Սերգեյ Գորոդեցկու դասախոսությունը Հայկական հարցի մասին»: Թղթակիցը բերում է Գորոդեցկու դասախոսության մեջ եղած հիմնախնդիրների ցանկը, որը չափազանց ուշագրավ է: Դրանում առաջ է քաշվում Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետությունների տակ գտնվող Արևելահայաստանի ու Արևմտահայաստանի միավորման և ինքնուրույն հայկական պետության ստեղծման խնդիրը: Հարցադրում կա՝ արդյոք հնարավոր է հայ ժողովրդի խաղաղ կյանքը մահմեդական աշխարհի շրջապատում: Ըստ Գորոդեցկու՝ Հայաստանը պետք է զարգացնի գյուղատնտեսությունը, առևտուրը և արդյունաբերությունը, ժողովրդական արվեստն ու գրականությունը: Նշվում են նաև Ռուսաստանի հետ ունենալիք մշակութային կապերը, ազգի ազատագրումը և ֆիզիկական գոյության պահպանումը, գաղթականների խնդիրը, եվրոպական երկրների հովանավորության օգուտն ու վնասը, նոր սերնդի դպրոցն ու դաստիարակության հարցերը: Առանձին կետով ներկայացվում են Հայաստանի կառավարության առաջնահերթ աշխատանքները: Եվ վերջում՝ եզրակացություններ: Ինչպես պարզ երևում է, Ս. Գորոդեցկին Հայկական հարցի արմատական լուծում էր առաջարկում: Մեջբերելով այս փաստաթղթի կարևոր կետերը՝ Ա. Չաքարյանը նորից հիշեցնում է, թե սկսած 1916 թ. գարնանից այս ռուս գործչի կյանքը սերտորեն կապվում է հայ ժողովրդի հետ:

Ըստ ամենայնի կարելի է արձանագրել, որ չափազանց ուշագրավ ու հետաքրքիր ընթերցվող այս մենագրության մեջ բերված փաստերը վկայում են, որ Սերգեյ Գորոդեցկին 1917–1921 թթ. եղել է Անդրկովկասը ռուսական գրականությանն ու արվեստին կապող հիմնական օղակը:

Ինչպես Սերգեյ Գորոդեցկին լավատեսորեն էր նայում Հայաստանի ապագային, նույն կերպ Անուշավան Չաքարյանի աշխատությունը գրված է լուսավոր ռիթմերով: Գրքի հեղինակը հավաստում է շատ կարևոր ու մշտապես արդի հետևյալ պատգամը. մենք հիշում ու գնահատում ենք բոլոր նրանց, ովքեր կիսում են հայ ժողովրդի երբեք չսպիացող ցավը, գնահատում են մեր արժանիքները և հավատում հինավուրց ու հերոսական ժողովրդի հարատևմանը: